ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2021թ. N -- Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 23-րդ կետերը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել Շառլ Ազնավուրի անվամբ՝«Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հաստատել «Գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ավագանու անդամ *Հայկ Միրզոյան*

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայ ժողովրդի ականավոր զավակ, մեծանուն երգիչ, կոմպոզիտոր, բանաստեղծ, դերասան Շառլ Ազնավուրը (իսկական անուն-ազգանունը՝ Շահնուր Վաղինակ Ազնավուրյան) անջնջելի հետք է թողել յուրաքանչյուր հայիս սրտում՝ իր ողջ ստեղծագործական կյանքը նվիրելով մարդկային հույզերին, անհատի և մարդկության ամենանվիրական զգացմունքներին, հայրենիքին, անսահման մեծ հոգատարություն և ծառայություն մատուցել Հայաստանին, անուրանալի ավանդ թողել համաշխարհային մշակույթին և գրականությանը: Արժանացել է Հայաստանի ազգային հերոսի կոչման, պարգևատրվել ԼՂՀ «Գրիգոր Լուսավորիչ» և Թեքեյան մշակութային միության ադամանդակուռ «Արարատ» շքանշաններով, Ֆրանսիայի Պատվո լեգեոնի 2 շքանշանով, Ֆրանսիայի Արվեստի և գրականության շքանշանով՝ կոմանդորի աստիճան և այլ բազմաթիվ շքանշաններով, աշխարհի շատ երկրների պետական պարգևներով: 2009 -ին ճանաչվել է XX դարի լավագույն երգիչ: Ազնավուրը գրել է 1000-ից ավելի երգեր, հուշագրություններ, պատմվածքներ, որոնք ամփոփված են նրա գրքերում և թարգմանվել են տասնյակ լեզուներով ու դարձել բեսթսելլերներ: Այդ գրքերից են, մասնավորապես, «Հայրս այդ հսկան», «Կյանքից կառչած», «Մեղմ շշուկով», «Քանի սիրտս բաբախում է» գրքերը, որոնք ըմբոշխնում է նաև հայ ընթերցողը մայրենի լեզվով:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Երևանի ավագանու անդամ Հայկ Միրզոյանի կողմից առաջարկություն է ներկայացվել Երևան քաղաքապետարանի և «Գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ-ի աշխատակազմին վերոնշյալ գրադարանն անվանակոչելու Շառլ Ազնավուրի անվամբ և արժանացել է դրական գնահատականի:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 23-րդ կետերի դրույթներով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն առաջարկությունը:

ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ավագանու անդամ **Հայկ Միրզոյան**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու և կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու և կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ավագանու անդամ **Հայկ Միրզոյան**

Հավելված
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ_____
/կազմված __.__.20___թ. և բաղկացած՝ 2 էջից/

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«___» _____ 2021թ.
N ___-Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

_____ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
15. 02 .2010թ.
Գրանցման թիվ՝ 271.210.03780
Վկայական 03Ա087397

15.02.2010թ. գրանցված կանոնադրության
Թիվ փոփոխությունը գրանցված է
Իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից
«-------» -------- 2021թ.
ԱՇԽԱՏԱԿԻՑ՝
_____

«ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
/Փոփոխություն/

ԵՐԵՎԱՆ 2021

«Գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Կանոնադրության տիտղոսաթերթում և 1.1 կետում «Գրադարանների կենտրոնացված համակարգ» բառերը փոխարինել «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» բառերով:

2. Կանոնադրության 1.10 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.10 Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝«Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

հայերեն կրճատ՝ «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ,

ռուսերեն լրիվ՝ «Централизованная система библиотек имени Шарла Азнавура» общинная некоммерческая организация,

ռուսերեն կրճատ՝ «Централизованная система библиотек имени Шарла Азнавура» ОНКО,

անգլերեն լրիվ՝ «Centralized system of libraries after Charles Aznavour» community Non-Commercial organization.

անգլերեն կրճատ «Centralized system of libraries after Charles Aznavour» CNOC:

3. Սույն փոփոխությունը հանդիսանում է 15.02.2010թ. պետական ռեգիստրում գրանցված «Գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը: